

ՄԵՔԵՆԱՅԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՏԱԿԸ ՄԱՆԵՎՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդվածը ներառում է հատուկ ռազմական օպերացիայի (ՀՌՕ) սկզբնական փուլում զորքերի (ուժերի) կիրառման մարտական փորձի վերլուծության արդյունքները, ինչպես նաև ռազմական կառավարման մարմինների և զորամասերի (ստորաբաժանումների) գործունեության ընթացքում դրանց ներդրման վերաբերյալ համապատասխան հանձնարարականները:

Հոդվածի շարադրանքը նպատակահարմար է օգտագործել ստեղծագործաբար՝ ստեղծված իրավիճակին համապատասխան:

1. ՌԴ ԶՈՒ գումարտակային մարտավարական խմբերի գործողությունների մարտավարության առանձնահատկությունները

Նշված բնագիծ (շրջան) դուրս գալու նպատակով ՌԴ ԶՈՒ-ն, հիմնականում կիրառում էր ստորաբաժանումների ռեյդային գործողությունների մարտավարություն, իսկ առանձին ուղղություններում, որտեղ նրանք ունեին հետախուզական տվյալներ Ուկրաինայի զինված ուժերի զորամասերի (ստորաբաժանումների) պաշտպանության բնույթի մասին՝ հարձակողական մարտի դասական մարտավարություն :

Ռուսական կողմի առաջքաշումը սկսվում էր ելման շրջաններից՝ ուժեղացված գումարտակային մարտավարական խմբերի (ԳՄԽ) կազմով, հետագայում ծավալվելով վաշտային մարտավարական խմբերերի (ՎՄԽ): Հետախուզումը առաջքաշման երթուղիներում իրականացվում էր հետախուզական ստորաբաժանումների կողմից՝ թեթև զրահատեխնիկայի («Тигр» տիպի) կիրառմամբ, իսկ որոշ առաջքաշման երթուղիներում գործում էին քաղաքացիական տրանսպորտով դետքերը՝ տեղի բնակչության և փախստականների անվան տակ: Մարտական հետախուզական դետքերը, որպես կանոն,առանձնացվում էին միայն շարասյան առջևում՝ մոտոհրաձգային և տանկային դասակների ուժերից:

Այն դեպքերում, երբ գլխամասային դետքը հանդիպում էր թշնամու փոքր խմբերին (խումբը ընկնում էր դարան), գումարտակի հիմնական ուժերի շարասյունը կանգ էր առնում և տարակենտրոնացված ծավալվում էր ռազմաճակատի երկայնքով ցրված վաշտային շարասյուններով՝ նախկին երթուղիներով նշված բնագիծ (շրջան) առաջ շարժվելու համար: Գլխամասային դետքը հրետանային կրակի աջակցությամբ դուրս էր գալիս մարտից և միանում հիմնական ուժերին (կամ վաշտի շարասյուներից մեկին): Եթե վաշտային շարասյուները չէին հանդիպում հակառակորդի դիմադրությանը, ապա անցնելով 5-10 կմ հավաքման որոշված վայրում միավորվում էին կազմելով հիմնական ուժերի գումարտակային շարասյուն:

Պաշտպանության համար պատրաստված հենակետերին (պաշտպանության շրջաններ) հանդիպելիս գումարտակի հիմնական ուժերը ծավալվում էին մարտակարգով և հակառակորդի վրա հարձակումն իրականացնում հետևյալ հերթականությամբ.

- կրակային դիրքերի և կրակային համակարգի հետախուզումն իրականացվում էր մարտով հետախուզում եղանակով: Սկզբում առաջ էին քաշվում մարտական մեքենաների խմբերը (2-3 ՀՄՄ և տանկ) հետևակային խմբի աջակցությամբ: Մինչև 1 կմ և ավելի հեռավորության վրա տանկերը խոցում էին ուրկրաինական ՍՌՏ (խմբային զենքի դիրքերը՝ ՀՀՏՆ, ՁՀՏՆ, գնդացիրներ), իսկ պաշտպանության նեքո գտնվող ՀՄՄ-ները շարունակում էին մոտենալ հակառակորդին;

- ուկրաինական կրակային դիրքերի բացահայտմամբ մարտով հետախուզություն իրականացրած ստորաբաժանումները կանգ էին առնում և հեռանում անվտանգ վայր՝ յուրային հրետանու արկերի պայթյուններից խուսափելու համար: Այդ պահին հրետանին ճնշում էր բացահայտված թիրախները: Կրակային հարձակման ավարտից հետո սկսվում էր առաջին շարակարգի ստորաբաժանումների գրոհը առաջնագծի ուղղությամբ :

Գրոհային ստորաբաժանումների հաջողության դեպքում և հարձակումը զարգացնելու նպատակով մարտի մեջ էր մտցվում ԳՄԽ ռեզերվը, որով փորձվում էր իրականցնել հակառակորդի շրջառումը՝ ջախջախումն ավարտելու կամ զբաղեցրած դիրքերից ուկրաինական ուժերին ետ քաշման հարկադրելու համար: Եթե հարձա-

կողական ստորաբաժանումները հաջողության չէին հասնում կամ կորուստները մեծ էին, ապա ետ էին քաշվում, որից հետո ավիացիան, ՀՁ և Հ-ն շարունակում էր ճնշել բացահայտված թիրախները: Միաժամանակ ռուսական ուժերի մյուս մասը փորձում էր շրջափակել մարտական գործողությունների վարման շրջանի ճանապարհները (տարհանման և մատակարարման ուղիները):

Հատկանշական է, որ հարևան ռուսական ԳՄԽ-ները կրակով և մարտավարական գործողություններով չէին աջակցում այն ԳՄԽ-ներին, որոնք մղում էին մարտը, այլ շարունակում էին ռեյդային գործողություններն իրենց սահմանված գոտիներում, երթուղիներում՝ ըստ առաջադրված խնդրի: Հետևաբար, ռուսների գործողությունների հիմնական նպատակ հանդիսանում էր ստորաբաժանումների շարասյուների արագ առաջխաղացումը դեպի նշված բնագծեր (շրջաններ)՝ պետական սահմանից (կողմերի մարտական շփման գծից) առավելագույն խորության վրա:

2. Ուկրաինայի զինված ուժերի մեքենայացված գումարտակների գործողությունների մարտավարության առանձնահատկությունները մանևրային պաշտպանությունում



Մանևրային պաշտպանությունում շրջանների, բնագծերի և կրակային դիրքերի շարակարգման համակարգի առանձնահատկությունները

Ռուսական կողմի սխալներն իրենց օգտին օգտագործելու փոխարեն, որոնք գտնվում էին հոգեբանական բարձր ճնշման տակ, ուկրաինական կողմը նահանջում և զբաղեցնում էր նոր, անպատրաստ դիրքեր: Գործողությունների այս մարտավարությունը հանգեցրեց տարածքի զգալի մասի կորստի, որը համեմատաբար ավելի մեծ էր քան երկու կողմից ունեցած անձնակազմի կորուստները (նկ.1).



Նկ. 1. Պաշտպանության առաջնագծի մատույցներում դարանակալման կասկադ

Ուկրաինայի զինված ուժերի ստորաբաժանումները չէին օգտագործում այնպիսի մարտավարական մեթոդներ, ինչպիսին էր առաջխաղացման երթուղիներում հաջորդական շարակարգված դարանակալումը, ականապայթյունային (ոչ պայթյու-

նային) արգելափակոցների հանգույցների ստեղծումը, պաշտպանական բնագծերի (դիրքերի) շարակարգումը, այդ թվում՝ փոքր ստորաբաժանումների կողմից (նկ.2).



Նկ.2. Դարանակալում-արգելափակում

Միևնույն ժամանակ, որոշ ստորաբաժանումներ մարտական գործողությունների ընթացքում կարողանում էին հմտորեն օգտագործել ռուսական կողմի սխալները, որսալ նախաձեռնությունը և կիրառել դասական մարտավարական հնարքներ: Արդյունքում՝ Ուկրաինայի ԶՈՒ բրիգադների որոշ ստորաբաժանումներ կարողացան ոչնչացնել ՌԴ տասնյակ միավոր տեխնիկա և գերևարել մեծ թվով զինծառայողներ: Այսպես, մարտի մեկ օրվա ընթացքում Ուկրաինայի զինված ուժերի մեքենայացված բրիգադներից մեկի ստորաբաժանումը, կիրառելով շարժական կրակային խմբերի դարանակալման մարտավարությունը, առաջ քաշման երթուղում ոչնչացրել էր 18 տանկ:

Մեքենայացված գումարտակի կրակային համակարգի կազմման առանձնահատկությունները

Հրետանային ստորաբաժանումները հաճախ օգտագործվում էին ոչ արդյունավետ (նկ.3): Մասնավորապես, 203,2 մմ 2C7-ից կրակի վարումը երեք տանկերի ուղղությամբ և «անհանգստացնող» կրակ վարելու համար կրակային դասակի (երկու թնդանոթի) կիրառումը: Միևնույն ժամանակ, խմբային (պլանային) թիրախների ուղղությամբ հրետանային մարտկոցներով կրակը զգալիորեն ավելի արդյունավետ էր:



Նկ.3. Լ-աձև դարան

Ականանետային մարտկոցների կրակային հնարավորությունները նույնպես ամբողջությամբ չէին օգտագործվում: Հրետանային հետախուզություն փաստացի չէր իրականացվում: Կրակի ճշգրտումն իրականացվում էր մակերեսորեն՝ «աչքաչափով»:

Հետախուզության վարումը կազմակերպվում էր ցածր մակարդակով, սովորաբար, միայն ԱԹՍ-ների կիրառմամբ: Հետախուզական մարմինների (հետախուզական խումբ, հետախուզական դետք) կողմից ռուսների մարտակարգերը (թիկունքը) ամբողջ խորությամբ չէր հետախուզվում: Օրինակ՝ հետախուզական տվյալների բացակայության պատճառով Ուկրաինայի զինված ուժերի բրիգադների ստորաբաժանումները չէին կարողանում մաքրել բնակավայրերը: Հետախուզության բոլոր տեսակների (հրետանային, ռազմական, ռադիոտեխնիկական և այլն) միջև փոխգործակցության ցածր կազմակերպումը թույլ չէր տալիս ստորաբաժանումների հրամանատարներին արդյունավետորեն կարգավորել հրետանու կրակը և հմտորեն կառավարել այն:

Ինժեներական արգելափակոցների համակարգի կառուցման առանձնահատկությունները

Ինժեներական արգելափակոցների համակարգը ներառում է ականապատ դաշտեր, ականների խմբեր, արգելափակոցների հանգույցներ, փլատակներ, հակատանկային և հակահետևակային այլ խոչընդոտներ, ինչպես նաև ոչնչացման համար պատրաստված օբյեկտներ, որոնք, որպես կանոն, ստեղծվում են պաշտպանության վարման ընթացքում՝ մարտական պահպանության դիրքի դիմաց, առջևի եզրում, վաշտերի հենակետերի թևերում և միջակայքերում, գումարտակի պաշտպանության տեղամասի խորքում:

Ինժեներական արգելափակոցների համակարգի հիմքը ականապայթյունային արգելափակոցներ են:

Մաննրային պաշտպանության ընթացքում ուկրաինական ստորաբաժանումների մեծամասնությունը չէր կիրառում ականապատ դաշտերի, ականների խմբերի, արգելափակոցների հանգույցների, փլատակների, այլ հակատանկային ու հակահետևակային խոչընդոտների համակարգի կառուցման մեթոդաբանությունը, միայն տեղադրում էին եզակի ականներ: Սակայն մի շարք դեպքերում դրական ազդեցություն էր ունենում տեղանքի կեղծ ականապատված հատվածների (ծառայում էր որպես կեղծ ականապատ դաշտեր) կամ ոչնչացման համար նախապատրաստված օբյեկտների (հատկապես կամուրջների) ականապատված լինելու մասին մակնշումը: Օրինակ ՝ ռուսական չորս տանկերի ոչնչացումը Սումիի մարզի ավաններից մեկում ՝ ճանապարհի փլատակների ստեղծման միջոցով:

3. Առաջարկություններ մեքենայացված գումարտակների հրամանատարներին մաննրային պաշտպանության նախապատրաստման և վարման վերաբերյալ

Մաննրային պաշտպանության նախապատրաստման մասով

Պաշտպանության նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել գործողություններ, որոնք ներառում են մարտի կազմակերպում (փոխգործողության կազմակերպում և կառավարում), գումարտակի նախապատրաստում մարտի, պաշտպանության զբաղեցում, գումարտակի պաշտպանության շրջանի պատրաստում, ենթակա ստորաբաժանումներում գումարտակի հրամանատարի գործնական աշխատանք և այլ գործողություններ:

Մաննրային պաշտպանություն իրականացնելիս գումարտակին նշանակվում է մի քանի դիրք (պաշտպանության շրջաններ) հիմնական շրջանի սահմաններից դուրս: Հիմնական ջանքերը կենտրոնանում են հակառակորդի հարձակման ամենահավանական ուղղություններում հարձակումը կասեցնելու և տեղանքի կարևոր հատվածները պահպանելու վրա ։

Սահմանափակ ժամանակի պայմաններում ստորաբաժանումներին որոշվում են վաշտայի հենակետերի, դիրքերի, հրետանային (ականանետային) ստորաբաժանումների առաջնագծի եզրերը, պահեստային շրջանները, հակառակորդի հնարավոր գործողությունների ուղղություններում դարանակալման վայրերը (տանկեր, հակատանկային միջոցներ), ինչպես նաև առանց բացառության գումարտակի բոլոր ստորաբաժանումների նահանջի հաջորդականությունը և նահանջի հնարավոր երթուղիները (ուղղությունները): Բոլոր դեպքերում կազմակերպվում է հստակ փոխգործողություն ստորաբաժանումների և տրված ուժերի ու միջոցների միջև:

Պաշտպանական մարտը մղվում է յուրաքանչյուր բնագծում՝ ստորաբաժանումների աստիճանական նահանջով (ետ գլորորք): Միևնույն ժամանակ, պաշտպանվող ստորաբաժանումները պետք է պահպանեն նախաձեռնությունը, առավելագույն խորությամբ կրակային հարված հասցնեն հակառակորդի մարտակարգին և պաշտպանական ու հարձակողական գործողությունների համադրությամբ մաս առ մաս ջախջախեն նրանց, ժամանակին դուրս գան հակառակորդի հարվածների տակից, հուսալիորեն պաշտպանեն և քողարկեն իրենց ստորաբաժանումները, հմտորեն օգտագործեն տեղանքի հատկությունները, կազմակերպեն արգելափակոցներ, կրակային դարաններ:

Մաննրային պաշտպանությունում շրջանների, բնագծերի և կրակային դիրքերի համակարգի կառուցման առանձնահատկությունները

Պաշտպանության շրջանը որոշվում է ավագ պետի հրամանով, դրա սահմաններում ստորաբաժանման հրամանատարը պաշտպանությունը կազմակերպում է իր ընտրած եղանակով: Սահմանափակ ժամանակի պայմաններում մեքենայացված գումարտակի պաշտպանության նոր շրջանում, որտեղ տեղազննություն չի իրականացվել, խորհուրդ է տրվում ենթակա ստորաբաժանումները (մեքենայացված գումարտակի մարտակարգի տարրերը) բաշխել համակարգի բնագծերում ու կրակային դիրքերում, մասնավորապես.

- մեքենայացված վաշտերի (ստորաբաժանումների 1-ին շարակարգի) պաշտպանական շրջաններ,
- ՀԶ և Հ-ի հաստիքային և տրված ստորաբաժանումների կրակային դիրքերի շրջաններ,
- դարանակալման շրջաններ և վայրեր (կրակային, հակատանկային և այլն),
- մեքենայացված գումարտակի ռեզերվների տեղաբաշխման տարածքներ,
- թիկունքային, տեխնիկական, բժշկական ապահովման ստորաբաժանումների տեղաբաշխման տարածքներ:

Մեքենայացված գումարտակի մարտակարգի յուրաքանչյուր տարրի համար պետք է որոշվեն հիմնական և պահեստային շրջաններ: Եթե մեքենայացված գումարտակի նշանակված պաշտպանության շրջանի չափը գերազանցում է մեքենայացված գումարտակի առկա ուժերի ու միջոցների հնարավորությունները, ապա պետք է կենտրոնանալ տեղանքի առավել կարևոր ու մարտավարական առումով շահավետ տարածքների պահպանման վրա: Այն տեղամասերում, որտեղից առաջին շարակարգի ստորաբաժանումներն ի վիճակի չեն հաստիքային և տրված միջոցներից

կրակով խոցել հակառակորդին, կազմակերպվում և իրականացվում է հրետանային կրակ, ռեզերվային ստորաբաժանումների համար նշանակվում է կրակային բնագծեր և ստեղծվում են արգելափակոցային հանգույցներ:

Մեքենայացված գումարտակի մարտակարգի կազմման մասով

Մեքենայացված գումարտակի մարտակարգը (նկ.4) մանևրային պաշտպանության նախապատրաստման ժամանակ բաղկացած է առաջին շարակարգի ստորաբաժանումներից, հրետանու, ՀՕՊ ստորաբաժանումներից (բաշխվում է մարտակարգի տարրերի միջև) և ռեզերվից:



Նկ.4. Մեքենայացված գումարտակի շրջանների, բնագծերի և կրակային դիրքերի առանձնահատկությունները մանևրային պաշտպանությունում

Խորհուրդ է տրվում մարտական պահպանությունը կազմակերպել առաջին շարակարգի վաշտերի դիտակետերի (դիտորդների) հետ համատեղ իրականացնելով կրակային դարաններ:

Առանձնահատկությունն այն է, որ մեքենայացված գումարտակի երկրորդ շարակարգը, որպես կանոն, չի կիրառվում, սակայն խմբերի բաշխմամբ ստեղծում է բավականին ուժեղ շարժական ռեզերվ:

Մարտակարգի տարրեր.

- շարժական հակատանկային խումբ,
- ականապատման և արգելափակոցների տեղադրման խումբ,
- կրակային դարանների խումբ,
- զրահախումբ,
- վիրավորների տարհանման խումբ և այլն:

Ռեզերվը շարակարգելիս կարևոր է հաշվի առնել այն փաստը, որ դրանցից յուրաքանչյուրը պետք է ապահովված լինի բարձր անցանելիություն ունեցող մեքենաներով: Այդպիսի մեքենաներ կարելի է ձեռք բերել տեղական ինքնակառավարման մարմիններից, մարտական գործողությունների շրջանին հարող բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերից: Եթե որոշ խմբեր հնարավոր չէ ապահովել առանձին տրանսպորտով, ապա նրանք գործում են համատեղ՝ որպես համազորային պահեստազորի մաս:

Պաշտպանական մարտում կրակային դարանը կազմակերպվում է գումարտակի (վաշտի) մարտակարգի տանկավտանգ ուղղության առջևի մասում, հենակետերի միջնամասում կամ թևերի այն վայրերում, որը կբարդացնի հակառակորդի կրակի տակից դուրս գալու համար մանների արագ ծավալումն ու իրականացումը:

Այն բաղկացած է.

- դիտորդների խմբից, որը նախատեսված է հետախուզություն իրականացնելու և հակառակորդին դեպի կրակային դարանների դիրքեր հանկարծակի դուրս գալը կանխելու համար: Դրա համար նրա առաջքաշման հավանական երթուղիներում տեղակայվում են դիտորդներ, իսկ ուժերի և միջոցների առկայության դեպքում կարող է տեղադրվել դիտակետ և ուղարկվել դետքային օղակ: Հակառակորդի մոտեցման (նահանջի) հնարավոր ուղիները ականապատելու համար խմբի կազմում պետք է ընդգրկվեն սակրավորներ,
- կրակային խմբերից, որոնք նախատեսված են հակառակորդին հանկարծակի խոցելու, կենդանի ուժի և տեխնիկայի ոչնչացման համար: Կրակային խմբերի թիվը պայմանավորված է դարանակալման մարտակարգի կառուցմամբ,
- պաշտպանության խմբից (группа прикрытия), որը նախատեսված է առաջադրանքը կատարելուց հետո դարանակալող հիմնական ուժերի նահանջը ապահովելու համար:

Կրակային դարանները կարող են իրականացվել ոչ միայն գումարտակի պաշտպանության առաջնագծի դիմաց, այլև պաշտպանության շրջանի սահմաններում՝ գումարտակի բնագծից դուրս ստորաբաժանումների մեկ այլ դիրք դուրս գալու ժամանակ:

Մեքենայացված գումարտակի կրակայնի համակարգի կազմման մասով

Մեքենայացված գումարտակի կրակային համակարգի հիմքը պետք է լինի մեքենայացված գումարտակի ականանետային մարտկոցի խափանիչ կրակի բնագծերը և կենտրոնացված կրակի հատվածներն ու աջակցող հրետանային ստորաբաժանումները:

Առաջ քաշման ուղիների շարասյուներում հակառակորդին պարտության մատնելու համար անհրաժեշտ է պլանավորել կենտրոնացված կրակի բացման մի քանի բնագծեր: Ստորաբաժանումների տեղաշարժը դեպի հաջորդ բնագծեր ապահովելու,

կրակային դարանները հետ քաշելու, դրանց միջև եղած թևերն ու միջակայքերը պաշտպանելու համար հակառակորդի մարտակարգերի ծավալման հավանական բնագծերում նախապես պլանավորվում է խափանիչ կրակ: Պաշտպանության առջևի մատույցներում հրետանային կրակի տակ հայտնված հակառակորդի խոցումը պետք է հասցվի տանկերի և ՀՄՄ-ների կրակով՝ կրակային դարաններից: Կրակի բաշխումը պետք է իրականացվի հետևյալ կերպ. տանկերը առաջին հերթին խոցում են հակառակորդի տանկերը, երկրորդ հերթին՝ նրա ՀՄՄ–ները: ՀՄՄ-ները խոցում են առաջին հերթին թեթև զրահապատ թիրախները, երկրորդ հերթին՝ անձնակազմ տեղափոխող ու ռազմատրանսպորտային մեքենաները: Կրակային դարանը չպետք է ներգրավվի մարտի մեջ, այլ պետք է գործի «հարվածի՛ր ու հետ քաշվի՛ր» սկզբունքով:

Գումարտակի (վաշտի) կրակի շերտեր, զինատեսակների կրակի բացման բնագծեր, որպես կանոն, չեն նշանակվում: Իրադրության պայմաններից (հատկապես տեղանքի պայմաններից) ելնելով, մարտակարգի (ստորաբաժանման) յուրաքանչյուր տարրի համար հակառակորդի խոցման գոտիները նշանակվում են յուրաքանչյուր բնագծի համար (հիմնականում միջանկյալ և վերջնական): Մեքենայացված գումարտակի պաշտպանության տարածքում կարող են նշանակվել 1-2 խոցման գոտիներ, որոնք չունեն առաջարկվող չափեր, և, որոնք կախված են մեքենայացված գումարտակի պաշտպանության տարածքի տեղանքի որոշակի երկարաձգության ու խորության պայմաններից: Պաշտպանության որոշակի շրջանի խոցման գոտիները որոշում է պաշտպանվող ստորաբաժանման հրամանատարը: Յուրաքանչյուր առանձին խոցման գոտում ստորաբաժանման հրամանատարը նախապես որոշում է կրակի բացման բնագծերը՝ ըստ զենքի տեսակի, կամ կրակն իրականացվում է հրամանատարի հրամանով:

Երբ վաշտի ուժերը ճակատում և խորությամբ զգալի տարակենտրոնացված են, որպես կանոն, կենտրոնացված կրակի տարածքներ չեն նշանակվում: Դասակների կենտրոնացված կրակի հատվածները նշանակվում են խոցման գոտուց դուրս՝ հակառակորդի հնարավոր մանևրելու ուղիներում՝ թևերում և խորքում:

Կրակի համակարգի հիմքը ականապայթյունային արգելափակոցների հետ համատեղ տանկերն, ՀՄՄ(ԶՓՄ) -ներն, հակատանկային միջոցներն ու հրաձգային զենքերն են:

Անշարժ կենտրոնացված կրակի հատվածները պլանավորվում են առաջքաշման հնարավոր ուղղությունների ամբողջ երկարաձգությամբ: Խափանիչ կրակը պլանավորվում է, որպես կանոն, հակառակորդի ծավալման հավանական բնագծերում և յուրային առաջնագծի առջև, թևերում, իսկ անհրաժեշտության դեպքում, յուրային պաշտպանության խորքում: Խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել.

- ուժերի և միջոցների ճակատով և խորությամբ տարակենտրոնացմանը;
- ստեղծված իրավիճակին համապատասխան ենթակա ստորաբաժանումներին լիազորություններ տալու գործում կառավարման ապակենտրոնացմանը, բայց ինժեներական առումով պատրաստված բնագծեր (դիրքեր) նահանջել միայն ավագ պետի հրամանով:

Ինժեներական արգելափակոցների համակարգի կառուցման մասով

• մարտական գործողությունների ընթացքում ստեղծել և ավելացնել ինժեներական արգելափակոցներ հաստիքային ստորաբաժանումների և ինժեներական զորքերի կողմից հատկացված ստորաբաժանումների ուժերով: Պաշտպանության խորքում գտնվող օբյեկտների ոչնչացման կարգը որոշում է ավագ պետը,

• առաջին հերթին պաշտպանության նախապատրաստման ընթացքում խորհուրդ է տրվում արգելափակոցներ ստեղծել հակառակորդի հնարավոր գլխավոր հարվածի ուղղությամբ, իսկ հետագայում դրանցով ծածկել համազորային ստորաբաժանումների հենակետերի, հրետանու կրակային դիրքերի, տեղակայման շրջանների ուղղությունները,

• մարտական գործողությունների ընթացքում ստեղծել և ավելացնել ինժեներական արգելափակոցները հաստիքային ստորաբաժանումների և ինժեներական զորքերի կողմից հատկացված ստորաբաժանումների ուժերով: Պաշտպանության խորքում գտնվող օբյեկտների ոչնչացման կարգը պետք է որոշվի ավագ պետի կողմից,

• ինժեներական արգելափակոցները խորհուրդ է տրվում իրականացնել հակառակորդին կորուստներ պատճառելու, նրա առաջխաղացումը կասեցնելու և մանները թույլ չտալու, նրան ոչ ձեռնտու ուղղությամբ շարժվելուն հարկադրելու և յուրային կրակային միջոցների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Ինժեներական արգելափակոցներով կահավորվում են այն շրջանները, հենակետերը, որոնք զբաղեցնում են ստորաբաժանումները, դրանց կցատեղերն ու միջակայքերը, բաց թևերը, կրակային միջոցների դիրքերը, հրամանատարան դիտակետի տեղակայման շրջանները և այլ կարևոր օբյեկտներ,

• ինժեներական արգելափակոցները կիրառվում են ավագ պետի պլանի համաձայն՝ գումարտակի (վաշտի) հրամանատարի մտահղացմամբ՝ հաշվի առնելով յուրային և ավագ պետի ստորաբաժանումների, կրակի համակարգի և բնական խոչընդոտներով մանևրելու հնարավորությունները:

Ինժեներական արգելափակոցների հիմքը ականապայթյունային արգելափակոցներն են: Ստորաբաժանումները սկսում են արգելափակոցների տեղադրումը կրակային համակարգի կազմակերպման սկիզբով կամ ավագ պետի հատուկ հրամանով: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ ականապատելիս դաշտերը պետք է մակնշվեն, բացառությամբ դարանների դեպքերի:

• Ինժեներական արգելափակոցների բնութագրերը ներառում են.
  - պահպանություն,
  - ցանկապատում,
  - կրակային պաշտպանության, արգելափակոցներով յուրային ստորաբաժանումների անցումների նշանակում,
  - ականապատ դաշտերի և պայթուցիկ սարքերի տեղափոխում պատրաստվածության անհրաժեշտ աստիճանի նդրանց գործողության դնում,
  - վնասված արգելափակոցների վերականգնում:

Մանևրային պաշտպանության վարման մասով

Եթե հայտնաբերվում է հակառակորդի հիմնական ուժերի առաջխաղացումը խորքից կամ ելման շրջանից (նկ.5), ապա սկզբում կրակային ներգործություն է իրականացվում նրա ուղղությամբ, թույլ չտալով նրան ծավալվել մարտակարգերում, հետագայում իրականացվում է կրակով խոցում:

Մարտական հետախուզություն իրականացնող թշնամու ստորաբաժանումների հարձակումը հետ է մղվում գումարտակի մարտական պահպանության ուժերով և միջոցներով, որոնք առաջին շարակարգի ստորաբաժանումների ժամանակավոր կրակային դիրքերից են առանձնացված: Գումարտակի հրամանատարը ղեկավարում է նրանց գործողությունները, աջակցում է հրետանու և դրա համար նշանակված այլ կրակային միջոցների կրակով, այդ դեպքերում գումարտակի հրամանատարական դիտակետը կարող է տեղակայվել առաջին շարակարգի վաշտի հենակետերից

մեկում: Հակառակորդի հարձակման հետ մղումը սկսվում է առաջին պաշտպանական բնագծի հեռավոր մատույցներում հրետանու կրակով խոցմամբ: Հակառակորդի առաջապահ ստորաբաժանումների մոտենալուն պես գումարտակը (վաշտը) հետախուզական դետքի, մարտական պահակախմբի, կրակային դարանների գործողություններով կորուստներ է պատճառում նրանց, խոչընդոտում է առաջխաղացմանը և ստիպում բացազատել գլխավոր ուժերը: Հարձակման ժամանակ հակառակորդի կանգնեցումն ապահովվում է մեքենայացված գումարտակի մարտական պահպանության ստորաբաժանումների ակտիվ գործողությունները:



Նկ.5. Մեքենայացված գումարտակի մաննրային պաշտպանության տարբերակ

Գումարտակի (վաշտի) մնացած ստորաբաժանումները, օգտագործելով մարտական պահպանության, արգելափակոցների և փլատակների արդյունքները, ինչպես նաև կիրառելով կրակով մաններ, թույլ չեն տալիս հակառակորդին դուրս գալ առաջին շարակարգի հենակետերից: Ստորաբաժանումները պայքարում են պաշտպանության յուրաքանչյուր բնագծի պահման համար՝ հյուծում են հակառակորդին և պատճառում առավելագույն վնաս:

Հենակետերը շրջանցելու հակառակորդի փորձերը խափանվում են հրետանու մաններով և կրակով, զրահախմբի, մաննրային խմբի և երկրորդ շարակարգի (ռեզերվի) ստորաբաժանումների գործողություններով:

Գումարտակի (վաշտի) նահանջը (մանները) նոր բնագիծ իրականացվում է ավագ պետի թույլտվությամբ (հրամանով): Մարտից ստորաբաժանումների դուրս գալուց առաջ կարող է իրականացվել մաննրային խմբի և ստորաբաժանումների հանկարծակի հակագրոհ հակառակորդի կողմից այն դիրքերից, որոնք հարձակման չեն ենթարկվել: Մանները իրականացնելու ընթացքում հակառակորդի շրջառումը, շրջանցումը և հարվածը կանխելու համար կազմակերպվում են դարաններ և առանձնացվում են թիկունքային ու կողային դետքեր: Մաննրի ուղղությամբ գործող հակառակորդի

մարտավարական դեսանտը և ԴՀԽ-ները ոչնչացվում կամ շրջանցվում են արգելապատնեշով մեկուսացնելուց հետո:

Հերթական բնագիծ դուրս գալուց հետո ստորաբաժանումներն անցնում են պաշտպանության և անմիջապես իրականացնում մարտունակության վերականգնման միջոցառումներ :

Աղբյուրը: https://vk.com/wall-70010540_31083?ysclid=lysjkvbihg657238572